Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1034

82
Q-55

Cruch
1902

2011

Ջ-54

ՋԵՐՈՄ ՋԵՐՈՄԻ

ՊԱՏՄՈՒԱԾՔ

ԸՆԴԱՐՁԱԿ

ԱԶԱՏ ԹԱՐԳՄ. ՌՈՒՄԵՐ.

Գ. Մ-Ղանեանի գործակցութեամբ

ՇՈՒՇԻ

ՏՊԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ՏԵՍՉՈՒԹԵԱՆ

Шуша Типог. Ар. Дух. Вѣдомства

2003

82
396
1965

ՋԵՐՈՄ-ՋԵՐՈՄԻ

ՆՈՐ ՅՆՈՐՔ

ՊԱՏՄՈՒԱԾՔ.

Ակատ թարգմ. Ռուսերէնից՝

Դ. Մ-Զահնազարեանցի

5745

1902

ՇՈՒՇԻ

Տպարան Հայոց Հոգևոր Դեսչութեան

212

Дозволено цензурою Тифлисъ 28 Сентября 1902 г.

ՆՈՐ ՑՆՈՐՔ.

Պատմուածք.

Նարկոս ես մի հետաքրքիր երիկոյ անց կացրի «Սոցիալիստների հասարակական ակումբում»։ Մենք մեծ ախորժակով ընթրեցինք. կերակուրները հիանալի էին. սարսափած ֆասանը բոլորին իրեալնի էր, իսկ 49 թուի շատո-լաֆիտա գինին լավ արժէր։ Սուտի գովել, կարծում եմ, դժուար է։

Ընթրիքից յետոյ սիգարներ ծխելով, (պէտք է ասել որ «Սոցիալիստների հասարակական ակումբում» շատ լաւերն են լինում), մենք սկսեցինք խօսել մի շատ հետաքրքիր թեմայի վրայ՝ —մարդկանց-ապագայ հաւասարութեան և դրամագրկի Հասարականացման մասին։

Ես անձամբ չէի մասնակցում այդ խօսակցութեան։ Փոքրութիւնից այնպէս

էի ստեղծուած, որ օրուայ հայց ճաբեռ-
լով էի զբաղուած և նոյնանման նիւթե-
րի մասին ժամանակ չունէի մտածելու։

Բայց ես մեծ ուշադրութեամբ լսում
էի իմ բարեկամներս գաղտնութիւնը
այն բանի մասին թէ աշխարհը մինչև ի-
րանց օրերը սխալ ճանապարհով է ըն-
թացել և թէ ինչպէս նոքա մտադիր են
մոտիկ ապագայում այդ սխալն ուղղել։

«Բոլոր մարդկանց հաւասարութիւն»,
—այդ էր նոցա գաղափարը. բացարձակ
հաւասարութիւն ամէն ինչի, գոյքի ու
կոչքի, հասարակական դիրքի, պարտաւո-
րութեանց, իրաւունքի հաւասարութիւն
և, որպէս հետևանք այդ բոլորի, «ազ-
գաւորութեան» և «զուտ-
ճութեան» հաւասարութիւն։

Աշխարհս հաւասարապէս պատկանում
է բոլորին։ Մարդկային աշխատանքի պը-
տուղը ոչ թէ նրա անձնական սեպհական-
ութիւնը պիտի լինի այլ ամբողջ հասա-

բակութեան։ Իւրաքանչիւրը պետութեան
բարօրութեան մասին պիտի մտածէ, իսկ
պետութիւնը նրան կհագցնէ ու կ'կերա-
կրի։

Սեպհականութեան անձնական իրա-
ւունքը մարդկանց ձեռքից պիտի խլուի,
քանի որ նա մի շղթայ է, որով մի քա-
նի անհատներ կապում են ժողովրդի մաս-
սան, մի աւազակային զէնք է, որով մի
խումբ մարդիք գաղտնաբար յափշտակում
են հասարակական աշխատանքի պտուղը։

Հասարակական դասակարգերը պիտի
վերացուին, որովհետև սոքա անջրպետ-
ներ են, որոնցով մարդկութիւնը բաժան
բաժան է եղել ու պառակտուել։ Ոչ մէկը
չպիտի արհամարհուի ամբոխից, այլ
ամէն ոք պիտի հասարակութեան անդամ
լինի և ազդեցութիւն ունենայ նրա վրայ։

Մայր ցամաքը, որպէս գիտատատ մայր
աշխատում է հաւասարապէս սնել ու մե-
ծացնել իւր բոլոր զաւակներին։

Զգիտի լինի ոչ սոփ, ոչ առատութիւն։ Ու մեզը ջղիտի թողնեն ոտքերէ, խելօքը չգիտի առնէլի մտածէ քան յիմարը։ Երկրի արդիւնքները պիտի հաւասար բաժանուի։ Բնութեան օրէնքներին առաջ հաւասար մարդը, հաւասար պիտի լինի մարդկային օրէնքներին առաջ ևս։ Անհաւասարութիւնն է ծնում օրինազանցութիւն, դըժբախտութիւն, ինքնասիրութիւն, հպարտութիւն, մեծամտութիւն և այլն, և այլն. . - Աշխարհս մի դրախտ կըլինէր եթէ մարդիք լինին հաւասար։ Մենք լցրինք բաժակներ և խմեցինք «հաւասարութեան» -«սուրբ հաւասարութեան» կենացրին հրամայեցինք նոր սիրդներ և գինի բերին։

Ես զարմայ առն շատ ուշ։ Երկար ժամանակ քնել չէի կարողանում, և մտածում էի բարեկարգեալ նոր աշխարհի մասին, որ աչքերիս պատկերացել էր։ Որքա՞ն հիանալի կլինէր աշխարհս, եթէ

բարեկամներս ծրագիրը իրագործուէր։ Չէին լինիլ այլ ևս այս յաւիտենական կռիւը, կռիւը առաջ ընկնելու։

Ամեն ինչ կհոսէր թագաւորութիւնը, նա կառայ ամեն ինչ սկսած օրորոցից մինչև գագաղը։ Աշխատանքն էլ ձանձրալի չէր լինիլ, քանի որ ոչ ոքի 3 ժամից աւելի աշխատել չեն թողնիլ օրական։ Աղքատը ոգորմութիւն չի խնդրիլ հարուստը չի մերժիլ, այլ ևս չեն փքուիլ ու հպարտանալ (հը՞մ այդ արդէն շատ էլ դուրեկան չէ . . .)։ Մնում է մտածել մարդկանց ապագայի վրայ և ուրիշ ոչինչ։

Այսպէս մտքերս խառնուեցին և ես խոր քնեցի . . . . . .

Երբ ես զարթնեցի, պառկած էի մի տաք օրինակ մահճակալի վրայ (ծածկուած էր ապակիով և արկղի ձև ունէր), մի բարձրը կամարաձև տեղեակում։

Գլխավերևս կպցրած էր յուշատախտակ (ինչպէս հիւանդանոցներում) . . . . . Ես

վեր նայեցի ու կարդացի հետևեալը.

«XIX—րդ դարու քնած մարդ.

«Այս մարդը գտնուել է քնած Լոնդոնի անելքից մէկում, հասարակական մեծ յեղափոխութիւնից յետոյ 1903 թ. Ցանաքիրուհու ցուցումներից խմացանք, որ սա գտնուելուց առաջ քնել է էլի տասն տարի (մոռացել են արթնացնել)։

«Հետաքրքրութեան համար թողնուած է որ տեսնենք ոլքան պիսի քնէ։

«Դրա համար որոշուած է, որ «քնած»-ը դրուի «Հազուագիւտութեանց մուզէում» 1903 թուի փետրուարին»։

Մի չափահաս պարոն, որ ինձնից ոչ հեռու աշխատում էր, մոտեցաւ ինձ, բարձրացրեց մահճակալիս կափարիչը և ասաց.

—Ինչ է պատահել, ով ձեզ անհանգստացրեց։

—Ոչ ոք, ասացի ես, երբ զգում եմ, որ բաւականի քնել եմ, ինքս ինձ եմ արթնանում։ Քանի՞ երրորդ դարն է

—Այժմ, ասաց նա, քսան իններորդ դարն է, դուք քնել էք ուղիղ 997 տարի։

—Շատ լաւ, նկատեցի ես, կարծում եմ, որ այդքան ժամանակում, եթէ ոչ ամէն ինչ, գոնէ շատ բան փոխուած կլինի աշխարհում, և հաւանականաբար դէպի լաւը—ուրեմն ես, իջնելով մահճակալիցս։

—Ես ենթադրում եմ, որ դուք կանէք նոյնը, ինչ որ այսպիսի դէպքում անում են ուրիշները, ասաց նա երբ ես հագնուում էի, դուք կցանկանաք թափառել ինձ հետ ամբողջ քաղաքը, կտեսնէք բոլոր փոփոխութիւնները, յիմար նկատողութիւններ կանէք և այլն . . . .

—Այո, ես նոյնն էի մտածում

—Ես այդ լաւ գիտեմ, փնթփնթաց նա։ Ես հագնուեցի։

—Դէհ գնանք, ես պատրաստ եմ ձեզ ծառայելու, ասաց նա առաջ ընկնելով։

Երբ մենք փողոցումն էինք ես դար-

ձայ ուղեկցեց՝

—Ճիշտ է չէ՞ աշխարհս այժմ լաւ կարգաւորուած է։

—Ի՞նչը հարցրեց նա։

—Աշխարհս, ասացի ես, իմ քնելուց առաջ բարեկամներս մտադիր էին աշխարհը յեղափոխեր։ Այժմ բոլոր մարդիկ հաւասա՞ր են արդեօք։

— Օ՜, այո, գոչեց նա, դուք կգտնէք աշխարհս լաւ կարգաւորուած։ Պէտք է ասեմ, որ ձեր քնած ժամանակը մենք շատ բան արինք։ Աշխարհս կատարելութեան մէջ է գտնուում։ Իսկ ինչ վերաբերում է ընդհանուր հաւասարութեան, գոլութիւնն մեր համեմատութեամբ ոչինչ են։

Թէև նա իւր միտքը շատ վաղարական ոճով արտայայտեց, սակայն ընդհատել անկարելի էր։

Մենք ուշադրութիւնք քաղաք։ Ամէն ինչ խաղաղ էր, ոչ մի ձայն չէր լսւում։

Փողոցները համակարգուած էին, ոչ մի անկիւնների կարուած և դարձանոցի մարդ։ Ոչ մի կառք կամ ձիաքարշ, ամէն ինչ անում էր էլեքտրական թիւնը։

Մեզ պատահող անցորդները ունէին լուրջ ու խնամարհ դէմք, իրար այնքան նման, որ կարելի էր ազգակիցներ համարել։ Բոլորն էլ ածիլուած, սեւահեր։

Ես հարցրի.

— Այս բոլոր մարդիկ մօտիկ ազգականնե՞ր են։

—Ազգականնե՞ր, օ՛չ,—ասաց ուղեկիցս, ինչե՞ց եղբայրները։

—Բոլորի դէմքը նոյնն է, իսկ մազերը սև։

— Օ՜ այդ մազերը արհեստական գոյնի է, ասաց նա, մենք բոլորս սև մազեր ենք կրում, իսկ եթէ մեկը ի ընէ այլ գոյնի մազեր ունի, մենք նեղիւում ենք։

—Ինչո՞ւ

—Ինչո՞ւ - կրկնեց զարմացմամբ ասաջնորդս, միթէ՞ չէք հասկանում, որ բոլոր

մարդիք հաւասար են։ Մի՞թէ հաւասարութիւն կըլինի, եթէ մի խումբ թեթևսոլիկ պարոններ և պարոնուհիներ ունենան խոպոպիկ մազեր, իսկ այլք լինեին «քաշալ»։ Լաւ ածիլելով բոլոր մարդկանց, և հրամայելով, որ երկար մազեր պահեն, մենք բնութեան սխալը մասամբ շտկում ենք։

— Բայց ինչո՞ւ սև մազերն է ընդունուած, հարցրի ես։

Նա պատասխանեց, որ լաւ չգիտէ, միայն թէ այդպէս է որոշուած։

— Ո՞վ է այդպէս որոշել հետաքրքրուելի ես։

— Բազմութիւնը, ասաց նա ջերմեռանդութեամբ գլուխը կախելով և աչքերը փակելով։

Մի քանի փողոցներ անցնելով ես հարցրի.

— Այս ինչ է, ո՛չ մի կին չի երևում։

— Կին, զարմանալով հարցրեց նա, ինչպէս, միթէ դուք չտեսա՞ք, մեր մօտով հագարներ անցան։

— Կարծեմ, որ ես չեմ դրկուել կանանց ճանաչելու ընդունակութիւնից, ես ոչ մէկին չեմ նկատել։

— Ահա՛, երկու հոգի, ասաց նա, ցոյց տալով երկու նոյնագգեստ անցորդների վրայ

— Բայց ինչպէ՞ս էք նրանց տարբերում աղամարդկանցից, չէ՞ որ նոքա նոյն տեսակ են հագնուում, ինչպէս աղամարդիք։

— Այո՛, բայց միթէ չէք նկատել նոցա մեջքի մեծագեայ համարները։

Զոյգ թուերը արտայայտում են կին, կենտերը — աղամարդ։

Լուռ անցանք մի քանի քայլ ես հարցրի.

— Բայց ինչի՞ պէտք եկան այդ համարները։

— Որպէսզի զանազանուի մէկը միւսից, պատասխանեց նա։

— Միթէ՞ այլ ևս ազգանուններ չկան։

— Ոչ։

—Ինչու՞

—Օ՞գա մի զարմանալի անհաւասարութիւն էր։ Օրինակ մէկը Մահմատանոի ազգանունով առերեսամբ էր նայում Սմիգալի վրայ, իսկ Սմիգալը արհամարհում էր Ջանին։ Դրա համար ոչնչացրուեցին ազգանունները և նոցա տեղ բռնեցին համարները։

—Իսկ բոզոքները չեղա՞ն հարցրի ես։

—Ի հարկէ եղան, բայց մեծամասնութիւնը խեղդեց նոցա ձայնը։

Մեր զրօսանքից առաջ ես մուտք էի լուացուէր։ Անյարմար էր այդպէս դատնալ մուզէյ. մանաւանդ որ շատ տաք էր։ Ես գարձայ ուղեկցիս.

—Չի՞ կարելի արդեօք մի տեղ լուացուէր։

—Ո՛չ ինքնակամ արդելուում է լուացուէր։ Մինչև ժամը հնգի կէսը սպասեցէք և թէյից առաջ միայն ձեզ կլուանան։

—Կլուանա՞ն, զարմացայ ես, բայց ո՞վ։

—Տէրութիւնը։

Ինչպէս երեւաց ուղեկցիս խօսքերից մարդիք համոզուեցին, որ եթէ իւրաքանչիւրը իւր կամքով լուացուի, ընդհանուր հաւասարութիւնը կխախտուի, որովհետև կան այնպիսի մարդիք, որոնք օրական չորս-հինգ անգամ են լուացուում, իսկ այլք, միայն մէկ անգամ։

Այդպիսով առաջ են գալիս կեղտոտների և մաքուրների երկու խմբեր, որոնք իրար թշնամի են ու ատելի։ Տէրութիւնը իւր ձեռն է առել լուանալու գործը և դրա համար ունի որոշ գործակալներ, որոնք օրական երկու անգամ լուանում են իւրաքանչիւր մէկին։

Ինքնակամ լուացուելը խստիւ արգելուում է։

Անցնելով առաջ ես նկատեցի որ ոչ մի փոքր տուն չկայ բոլորը մեծ-մեծ շինութիւններ են, նոյն տեսակ և նոյն մեծութեան։

Երբեմն միայն պատահում էին փոքրիկ շինութիւններ, որոնք կրում էին „մուզէյ“,

«Հիւանդանոց», «խորհրդակցական ժողովարան», «բաղնիս», «գիմնազիա», «գիտութեան ճեմարան», «արդիւնաբերութեան ցուցահանդէս», «գեղեցկախօսութեան դպրոց» և այլն, և այլն ցուցատախտակներով։ Մանաւոր ոչ մի տուն չտեսայ։

—Մի՞թէ քաղաքում ոչ մի մարդ չի ապրում, հարցրի ես։

—Դուք որոշել էք յիմար նկատողութիւններ անել, ասաց նա բարկացած՝ շեշտով։ և իսկապէս ձեր ծրագրից դուրս չէք գալիս։ Բայց ինչի՞ց հանեցիք այդպիսի տխմար եզրակացութիւն,

--Որովհետև ոչ մի մանաւոր տուն չտեսայ

—Մենք կարիք չունինք այդպիսի տների։ Մենք բոլորս այժմ սոցիալիստներ ենք։ Ապրում ենք հաւասար և եղբայրաբար։ Ահա՛, այդ շինութիւնները, որոնք դուռ տեսնում ես, մեր բնակարաններն են։ Իւրաքանչիւր շինութիւն հազար քաղաքացի է տեղաւորում։ Իւրաքանչիւրում

գտնւում է հազար մահճակալ, ամէն մի սենեակում հարիւր, յիսուն լուացարաններ, սեղանատներ և խոհանոցներ։ Առաւօտեան ժամը 7-ին զանգ է տրւում, բոլորն արթնանում ու հաւաքում են անկողիններից։

Ժամը $7^1/_2$-ին բոլորն հաւաքւում են լուացատուն, ուր նրանց ածիլում, սանրում ու լուանում են։ Ժամը 8-ին նախաճաշ մեծ սեղանատան մէջ։ Նախաճաշը բաղկացած է կէս բաժակ տաք կաթից և մի կտոր հաճարի հացից։ Մենք բոլորս խիստ վեգետարիաներ ենք։ Անցեալ դարում վեգետարեան վարդապետութեան հետևողները շատ բազմացան և իրենց յաւ. կազմակերպութեան շնորհիւ վճռական ձայն ձեռքի բերին բոլոր ընտրութիւնների և խորհուրդների մէջ։ Ժամը 1—ին նորից տրւում է զանգ։ Բոլորը հաւաքւում են ճաշի, որ բաղկացած է լրուց, սիսեռից և տապակած կանաչեղէնից։ Մեծ ուռներին բաժանւում է

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Ֆ. Հ. Публичная Библиотека
7/XI—1922
ԱՌՈՒ Հ. ԱՍՈՒՆՅԱՆ
Ա. ՍՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

քաղցրաւեռնիք։ Ժամը 5-ին թէյ, որից յետոյ բոլոր ճրագները հանգցնում են և պառկում են քնելու։

Այսպէս ենք ապրում, հաւասար երաբ և՝ դրագիրը, և՝ ջրկիրը, և՝ ապրատարը, և կոշկակարը, և՝ պղնձագործը, և՝ բոլորը, բոլորը . . . .

— Իսկ ինչպէ՞ս են ապրում ընտանիքներում հարցրի ես։

— Օ՜, այժմ մեզ մօտ ընտանիքներ չկան, ամուսնութիւնն էլ վերացուել է, պատասխանեց նա, մենք պտակը ոչնչացրինք սրանից ուղիղ երկու հարիւր տարի առաջ։ Գիտէք որ ամուսնական կեանքը մեր սիստեմին չէր համապատասխանում։ Ընտանեկան կեանքը իր հիմքերով հակասում է սոցիալիզմին. մարդիք աւելի ընտանիքի համար են մտածում, քան ամբողջութեան, նոքա աւելի ընտանիքի քան հասարակաց կարիքի համար են աշխատում։ Մի մարդ որ սիրահարուած է մի

կնոջ վրայ, համարում է նրան մի գերապոյն էակ, հրեշտակ, այլոց հետ համեմատած։ Մի երիտասարդի գերայ սիրահարուած կինը, կարծում է իւր սիրածին և՝ ուժեղ, և խելօք, քան ուժեղ սեռի այլ անդամները։ Մայրերը իրանց միսիթարում են այն մտքով թէ իրենց որդիները աւելի լաւ են քան օ՛ւրիշներինը. իսկ մանուկները իրենց ծնողներին աւելի լաւ մարդիք են կարծում։ Ինչ հայեցակէտից ուզում էք դիտեցէք. ընտանեկան կեանքը մեզ թշնամի է ամեն տեղ։ Բարդաւորի մէկը ունի մէկ գեղեցիկ կին և երկու տասնամեայ որդիներ. իսկ նրա հարևան մի դժբախտ արարած ունի մի նիհար կին և տասն երկու հիւանդոտ երեխաներ։ Որտե՞ղ է այսպէս հաւասարութիւնը։ Սոդոմիսի բան չի կարելի թողնել։ Սէրը, ամուսնութիւնը մեր յաւիտենական թշնամին է։ Սէրը մարդկութեան դէպի կորուստ է տանում։ Ահա թէ ինչու ոչնչ-

չայրինք ամուսնութիւն և ընտանիք։ Այժմ մենք չունինք պտակ, չունինք և ապահարգան, չունինք ընտանեկան գուարճութիւն, չունինք նոյնպէս և վիշտ։ Չունինք հրատապ համբոյրներ, չունինք ջերմ արցունքներ, չունինք սիրոյ կատարման երանելի րոպէներ, չունինք և սիրժուած դառն րոպէներ։

—Իսկապէս այդ շատ հանգիստ բան է, նկատեցի ես, միայն մի հարց գիտութեան հետաքրքրութիւնից, բացատրեցէք ինձ, թէ ո՞րտեղից են ձեր նոր քաղաքացիները, կին ու ազամարդ։

—Ծնելու արհեստն էլ մենք շատ լաւ հիմքերի վրայ ենք դրել. մօտաւորապէս այնպէս, ինչպէս ձեր օրերում բազմացնում էին կովերն ու ձիերը։ Վարսանը, համաձայն կայսերական բարձրագոյն հրամանի, պատրաստւում են որոշ թիւ փոքրիկների, որոնք եաշխարհ են գալիս ամենահմուտ բժշկականութեան խնամքի

ներքոյ, համաձայն գիտութեան վերջին խօսքի։ Ծնելուն պէս նոցա ծնողներից խլում են (այլապէս նոքա կկատուին ծնողի հետ) և տեղաւորում են հատուկական ապաստանարաններում, իսկ յետոյ նաև դպրոց են տալիս։ Այստեղ մանուկները ապրում են մինչև 14 տարեկան հասակը։ Այդ հասակում տէրութեան քննիչները քննում ու կոչում են տալիս։

Համաձայն այդ կոչման նոքա սկսում են նախապատրաստուել։ Քան տարեկանում իւրաքանչիւրը լիազօր քաղաքացի է, և ձայն տալու իրաւունք ունի։ Այս էլ պէտք է ասեմ, որ կին ու ազամարդ օրէնքի առաջ հաւասար են։

—Բայց որո՞նք են այդ իրաւունքները, հարցրի ես։

—Որո՞նք, զարմացաւ նա, երկու ժամ է ձեզ այդ իրաւունքների մասին եմ պատմում, մի՞թէ չէք լսել։

Քաղաքը երկար չափփում էինք, բոլոր

փողոցները միապաղաղ, ո՛չ ձայն, ո՛չ խօսք լսելի էր չորս կողմից։

—Մի՞թէ այսպէս գործարաններ կամ խանութներ չկան, հարցրի ես։

—Ոչ՝, պատասխանեց նա, ինչի՞ են պէտք նոքա, պէտութիւնը մեզ կերակրում, հագցնում, ածիլում է, մենք ոչնչի կարիք չունինք։

Ես սաստիկ ծարաւ էի։

—Այստեղ չի՞ կարելի խմելիք ճարել, հարցրի ես։

—Ինչ, խմե՞լ դու գիս, չգիտե՞ս որ մեզ ճաշից յետոյ մի մի բաժակ ,, կակաօ ,, պիտի տան։

Բացատրել նրան իմ ոչ ,,Սոցիալիստ,, ծարաւի օրինաւորութիւնը ես չէի կարող. դրա համար կարծ պատասխանեցի։

—Լա՛ւ, ոչինչ.

Մի քիչ անցնելով, մեզ պատահեց մի մարդ, որ առողջ և ուժեղ էր երևում, սակայն նկատեցի, որ նա միայն մի թև

ունի։ Թէև՝ շատ այդպիսիներին տեսայ, սակայն այժմ միայն հետաքրքրուեցի թէ ինչ կնշանակէ այս։

—Այն դէպքում երբ մէկը իւր այժով ու հստակով գերազանցում է ուրիշներից, բացատրեց առաջնորդս, ընդհանրական հաւասարութիւնը պահպանելու համար նոցա ձեռքը կամ ոտքը կտրում ենք։ Գիտէ՞ք, բնութիւնը երբեմն չի յարմարւում ժամանակի ոգուն և մենք նրա սխալը ստիպուած ենք ուղղել։

—Համարձակւում եմ մատնել, նկատեցի ես, որ դուք անկարելի կը համարէք նրանց բոլորովին ոչնչել։

—Բոլորովին ո՛չ զոչեց նա, մենք կարելի բաներ ենք միայն անում։

—Բայց ինչպէս էք վարւում այն դէպքում, երբ ծնւում է մէկը ատաղնջաւոր ձիրքերով, կամ հանճարեղ խելքով, հետաքրքրուեցի ես։

—Օ՜, դրա համար էլ շատ վէճեր եղան.

սակայն այժմ այդ էլ հիշատակել ենք։

Գլխի վրայ մի թեթև օպերացիա ենք կատարում և ուղեղի տեղերը պաշարը հանում։

—Եւ այդ բոլորից յետոյ, կարծում էք թէ ճի՞շտ է.ք։

—Ի հարկէ . . . գոչեց նա զարմացած։

—Բայց ինչո՞ւ ձեր որոշումները ճիշտ են, յուզուած հարցրի ես։

—Մեծամասնութիւնը չի կարող անճիշտ կամ սխալ լինել բացատրեց նա։

—Իսկ ի՞նչ են մտածում այդ օպերացիայի ենթարկուող ողորմելիները։

—Ինչ կարող են անել նոքա, չէ՞ որ փոքրամասնութիւնն են։

—Այո՛ բայց միթէ՞ փոքրամասնութիւնը իւր գլխի, ոտքի կամ ձեռքի տեղը չէ, և ոչ մի իրաւունք չունի։

—Փոքրամասնութիւնը ոչ մի իրաւունք չունի։

Քաղաքի միապետութիւնը ինձ ձանձ-

բացրեց։ Ես ցանկացայ գնալ մօտակայ գիւղերի „բէֆորմեների“ հետ ծանօթանալու։ Բայց նա յայտնեց, որ այնտեղ ոչ մի նորութիւն չկայ, քանի որ ամէն տեղ նոյն միապաղաղութիւնն է տիրում։

—Ասացէք խնդրեմ, չի՞ կարելի ձեր երկրից մի այլ տեղ փոխուիլ հարցրի ես։

—Օ՜ կարելի է, սակայն դրանով ոչինչ չէք շահիլ քանի որ ամէն երկրում նոյնութիւն է տիրում։

—Եւ դուք ոչնչով ձեր կեանքը չէ՞ք փոխում, հարցրի ես. թատրոններ ունի՞ք։

—Ո՛չ կատակերգակները և ծաղրածուները էլ ընդհանրական հաւասարութեան պրինցիպին խանգարիչներ եղան և մենք թատրոնը ոչնչացրինք։

—Իսկ գրքեր կարդալ թոյլատրւո՞ւմ է, հետաքրքրուեցի ես։

—Այո՛, բայց գրողներ շատ քիչ կան։

—Ինչո՞ւ հարցրի ես։

—Որովհետև մեր կեանքը այնքան լաւ է

կազմակերպուած, որ կարիք չունի հրապարակական քննութիւններին։ Գրում են այժմ միայն մարդկային ապագայի մասին։

—Ձիշտ որ այժմ գրելու նիւթ չկայ։ Իսկ ի՞նչպէս էք վերաբերում հին գրողներին, չէ՞ որ դուք ունեցել էք Վա՛լտէր Սկոտտ Շէքսպիր, Շիլլէր, Տէկերրէյ, ես էլ մի քանի շարադրութիւններ ունէի։ Ի՞նչ արիք դրանց, հարցրի ես։

—Օ՜, մենք ամեն ինչ այրեցինք, այնտեղ տիրում էր անհաւասարութիւն, մարդիք գերի էին այլոց ձեռքին, պատասխանեց ուղեկիցս։

Առաջնորդիս խօսքերից երևաց, որ նոքա կործանել են բոլոր արձաններին, այրել էին բոլոր նկարները, նոքա անբարոյականացնող տարրեր էին։ Արգելուած են ամեն տեսակ խաղեր. այնտեղ միայն մի, նախանձ կայ, հաւասարութիւնը խախտում է։

—Քանի՞ ժամ են աշխատում քաղաքացիք, հարցրի ես։

—Երեք, ասաց նա, դրանից յետոյ ազատ են, կարող են անել ինչ ուզում են։

—Իսկ ի՞նչ են անում, ճնացած ժամանակներում

—Հանգստանում ենք

—Ի՞նչպէս, հանգստանալ քսանուվեց ժա՞մ . . . .

—Ո՛չ, միայն չենք հանգստանում. խօսում ենք, վիճում ապագայի մասին։

—Միթէ չէ՞ք ձանձրանում ապագայի մասին մտածելով։

—Բոլորովին . . . . . գոհոգութեամբ ասաց նա։

—Իսկ այդքան մտածելուց յետոյ կարող է՞ք այնպիսի մի հարց, որը անվճռելի է, վճռել։ Օրինակ, թէ ինչ է սպասում մարդկանց ապագայում։

—Ի՞նչպէս, իհարկէ կարող ենք ասել որ աշխարհս ունի կ՚յառաջդիմի, էվոլուցիայեամբ ամեն ինչ կանենք և

կարելի է, որ մի ձայնի տեղ երկուսը կունենանք:

— Շնորհակալ եմ, հասկացայ. էլ ի՞նչ հետաքրքիր բան կայ ձեր աշխարհում: Հաւատը պահու՞մ էք:

— Ինչպէս չէ:

— Դուք յարգում է՞ք Արարիչ Աստուծուն

— Ինչպէս չէ :

— Ի՞նչ էք անուանում նորան:

— Բազմութիւն:

— Մի հարց էլ: Արդեօք իմ հարցերով ձեզ չը ձանձրացրի:

— Օ՜ ոչ ես դրա համար տէրութիւնից ռոճիկ եմ ստանում:

— Միթէ, ես կարծում էի թէ ձեր թանգագին ժամանակն եմ խլում, բայց ես մի բան էլ կցանկանայի իմանալ ձեզ մօտ յաճախ են պատահում ինքնասպանութիւններ:

— Ոչ, մեզ մօտ այդպիսի դէպքեր բոլորովին չեն պատահում:

Ես նայեցի անցորդների դէմքերին. բոլորը անդորր ու խաղաղ էին, ես դուցա ճանաչեցի, դոքա նոյն դէմքերն էին որպէսիքն ունէին ձիերն և կովերն «անդր բարենորոգեալ» աշխարհում . . .

— Ո՛չ, դոքա անասուններ են. այդպիսիները չեն մտածում ինքնասպանութեան մասին . . . . . .

Տարօրինակ է . . . . ինչպէ՞ս իմ առաջ եղած բոլոր դէմքերը չքացան: Որտե՞ղ է ուղեկցս, ինչո՞ւ ես յատակի վրայ եմ նստած, մի՞թէ այս ձայնը տանտիրուհուս Բէլզեբի ձայնը չէ: Միթէ նա էլ հաղար տարի քնել է: Մի՞թէ այս բոլորը ցնորք է և ես նորից XX-րդ դարու սկզբումն եմ.

Բայց պատուհանից ներս էր գալիս կանանչի ժխորի ձայնը, մարդիք կուռում են, թշնամանում, վիճում, ուրախանում, վշտանում, մի խօսքով ապրում են . . .

ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Այլ ես չեմ ծխիլու այնքան ուժեղ սիգարներ . . . . . .

ՎԵՐՋ։

1034

2079